## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2022 թվականի թիվ 20-Ա
ք. Երևան

**«ՅՈՒՔՈՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2021 թվականի դեկտեմբերի 28-ին հարուցված թիվ 15 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

2021 թվականի դեկտեմբերի 28-ին Հանձնաժողով մուտքագրված «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմումում նշված է ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՅՈՒՔՈՄ»ՓԲ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից առանց նախապես իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման իր տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդներին հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող կինո-հեռուստաֆիլմեր (ֆիլմեր) տրամադրելու փաստի վերաբերյալ:

Ըստ Իրավատիրոջ՝ ցանցային օպերատորն առանց իրավատիրոջ համաձայնության իր տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդներին առաջարկել է հետևյալ կինո-հեռուստաֆիլմերը.

| Ֆիլմի անվանում | Տևողություն | Արտադրության տարեթիվ | Արտադրող երկիր | Լիցենզիայի գործողության ժամկետ |
|---|---|---|---|---|
| «SUPERЗЯТЬ» («LE GENDRE DE MA VIE») | 1x100 | 2018թ. | Ֆրանսիա | 11.01.2021թ.- 10.01.2026թ. |
| «ТАКСИ 5» («TAXI 5») | 1x101 | 2018թ. | Ֆրանսիա | 11.01.2021թ.- 17.06.2025թ. |
| «ДЕДУШКА ЛЕГКОГО ПОВЕДЕНИЯ» («DIRTY GRANDPA») | 1x102 | 2015թ. | ԱՄՆ | 11.01.2021թ.- 16.05.2024թ. |
| «ОСОБЕННЫЕ» («SPECIALS» (HORS NORMES) | 1x14 | 2019թ. | Ֆրանսիա | 11.01.2021թ.- 10.01.2026թ. |
| «ТАЙНА В ИХ ГЛАЗАХ» («SECRET IN THEIR EYES») | 1x111 | 2015թ. | ԱՄՆ | 11.01.2021թ.- 17.06.2025թ. |
| «ПЕТЛЯ ВРЕМЕНИ» («LOOPER») | 1x118 | 2012թ. | ԱՄՆ, Չինաստան | 11.01.2021թ.- 12.04.2024թ. |

Իրավատերը տեղեկացրել է նաև, որ հանդիսանում է դիմումում նշված ֆիլմերի նկատմամբ հեղինակային իրավունքների Հայաստանի Հանրապետության տարածքում բացառիկ իրավատերը: Հարկ է նշել, որ Իրավատերն ավելի վաղ դեռևս 2021 թվականի նոյեմբերի 30-ին Հանձնաժողով հասցեագրված դիմումով ևս տեղեկացրել էր, որ «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊԸ-ն 2021 թվականի հունվարի 11-ին «ՄԱՌԻՐԻՍ ՖԻԼՄ» ՍՊԸ-ի հետ կնքված լիցենզիոն պայմանագրի հիման վրա հանդիսանում է վերոնշյալ ֆիլմերի Հայաստանի Հանրապետության տարածքում տեսավարձույթի միջոցով (SVOD) ցուցադրության իրավունքի բացառիկ իրավատերը և ներկայացրել է պայմանագրի պատճենը:

Ընդ որում, Իրավատերը դիմումում նշել է, որ «SUPERЗЯТЬ» («LE GENDRE DE MA VIE») ֆիլմի մասով ցանցային օպերատորն ընդունել է իրավախախտման փաստը և նշվածի համար որպես ապացույց ներկայացրել է Իրավատիրոջ ներկայացուցչի և ցանցային օպերատորի միջև տեղի ունեցած նամակագրությունը (գրությունների պատճենները), մասնավորապես՝ տվյալ ֆիլմը պարբերաբար վարձույթով ցուցադրելու խախտումը վերացնելու Իրավատիրոջ ներկայացուցչի գրությանն ի պատասխան ցանցային օպերատորը 2021 թվականի հուլիսի 21-ի թիվ 1087 գրությամբ հայտնել է, որ իր եթերացանկից հանել է նշված ֆիլմը և իր պատրաստակամությունն է հայտնել հանդիպել բանակցություններ սկսելու նպատակով:

Սակայն, Իրավատերն ընդգծել է նաև, որ չնայած իրավախախտման փաստի ընդունմանը ցանցային օպերատորն արհեստականորեն ձգձգել է բանակցությունների գործընթացը և որևէ միջոց չի ձեռնարկել իրավախախտման հետևանքով Իրավատիրոջը հասցված վնասի վերականգնման մասով, իսկ դիմումում նշված մնացյալ 5 ֆիլմերը շարունակում են առանց Իրավատիրոջ համաձայնության ցայսօր ներկայացված մնալ ցանցային օպերատորի տեսավարձույթ ծառայության տեսացանկում:

Համադրելով փաստերը, Իրավատերը պնդում է, որ քննարկվող դեպքում գործ ունենք ֆիլմերն առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության ցուցադրության «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտման հետ և այս պարագայում առկա է նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների» մասին օրենքով պաշտպանվող տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ Իրավատիրոջ ունեցած հեղինակային իրավունքների խախտում, քանի որ Իրավատերը հանդիսանում է թվարկված ֆիլմերի նկատմամբ հեղինակային իրավունքների Հայաստանի Հանրապետության տարածքում բացառիկ իրավատերը, իսկ ցանցային օպերատորի կողմից նշված ֆիլմերը տեսավարձույթ ծառայության միջոցով առաջարկվում է առանց Իրավատիրոջ հետ հեղինակային պայմանագիր կնքելու:

Ելնելով վերոնշվածից և տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության խախտման փաստից, Իրավատերը խնդրում է ցանցային օպերատորին պատասխանատվության ենթարկել առանց Իրավատիրոջ համաձայնության վերոհիշյալ ֆիլմերն իր տեսավարձույթ ծառայության տեսացանկով բաժանորդներին առաջարկելու համար:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Իրավատիրոջ դիմումը՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի դեկտեմբերի 29-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը 2022 թվականի հունվարի 21-ին Հանձնաժողովին գրավոր տեղեկացրել է այն մասին, որ իրենք առաջարկել են Իրավատիրոջը հանդիպել և քննարկել բարձրացված հարցերի վերաբերյալ և հանդիպումից հետո կներկայացնեն մանրամասն պարզաբանումներ և բացատրություններ: Ցանցային օպերատորի կողմից 2022 թվականի փետրվարի 4-ին նոր գրությամբ Հանձնաժողովին կրկին տեղեկացրել է, որ Իրավատիրոջ հետ հանդիպումը չի կայացել երկու կողմերի ներկայացուցիչների կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված լինելու պատճառով և հանդիպումը նախատեսվում է գալիք շաբաթվա վերջին, որից հետո Հանձնաժողովին կներկայացնեն մանրամասն պարզաբանումներ և բացատրություններ:

Այսպիսով, վարչական վարույթի շրջանակներում ցանցային օպերատորի կողմից որևէ պարզաբանումներ և բացատրություններ չի ներկայացվել:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատմա նարդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը»:

Օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են.

3. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակում են իրականացնում ոչ գծային Հեռարձակողները, որոնք գործունեություն են իրականացնում կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով գործունեությունը թույլատրող որոշումն ստանալուց հետո:

4. Կարգավորող պետական մարմնի՝ գործունեությունը թույլատրող որոշումն ստանալուց հետո ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 199-Ա որոշմամբ՝ ցանցային օպերատորին տրվել է ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն:

Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 18-ի «Ոչ գծային Հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման

գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու կարգը սահմանելու մասին» թիվ 160-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4-րդ կետը սահմանում է.

«4. Հանձնաժողովի՝ գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով»:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի գ) կետի համաձայն՝ Հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝

գ) տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն և մուլտիպլիկացիոն կինոնկարները, կարճ երաժշտական տեսահոլովակները, գովազդային, փաստագրական, փաստավավերագրական և այլ ֆիլմերը):

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որևէ մասը, որը տվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Իրավատիրոջ կողմից Հանձնաժողով ներկայացված ապացույցների հետ, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորը չունենալով խնդրո առարկա հանդիսացող ֆիլմերի Իրավատիրոջ թույլտվությունն առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի իր տեսավարձույթ ծառայության տեսացանկում բաժանորդներին առաջարկել է հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ֆիլմերը՝ խախտելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջը:

Հանձնաժողովն ամրագրում է, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը Հանձնաժողովի կողմից ստանալով առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլատրող որոշումը, պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող իրավական պահանջները:

Այսպիսով, վարչական վարույթի շրջանակներում ցանցային օպերատորի կողմից խնդրո առարկա հանդիսացող ֆիլմերի վերաբերյալ որևէ պարզաբանում և բացատրություն չներկայացնելը ևս փաստում է այն մասին, որ ցանցային օպերատորն առանց

հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի ցուցադրում է խնդրո առարկա հանդիսացող ֆիլմերը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 53-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***.

1. «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վարչական տույժը՝ գրավոր նախազգուշացում՝ խախտումները հետագայում վերացնելու հանձնարարությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

24 փետրվարի 2022թ.
ք. Երևան